

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԼԵԶՈՒԻ

ՄԻԶԻՆ ՀԱՅԵՐԵՆ

Անփոփոխսելի բառեր, միջակ անուններ եւն.

Հայնց, այնց, հանց, հչնց

Հանչաք, այնչաք, այդչաք, այսչաք, որչաք, միաչաք: — Հայնցեղ

Կիմա, կիմայ, յիմայ

հօս, հօտ, հօն, ի հօս, ի հօտ, ի հօն
այլ վայր, այլվայր, այլուայր, այլուի,
առջե, յառջե, յետե, հետե, վերե,
ներքե, գրուցեւ,

վերջե, յերջե, ստորե, ընդ ներքսէ,
ընդ նեքսէ, ընդ դրացէ,

ընդ դրուցէ, ի զրացէ, ի դուրք, ի ներք,
ցներքս, ցներքսէ,

ցներքն, ցներքսէ, ցդրուց, ցդրուցէ ևն:

Անսից, աստից, յայսկի, յայնկից,
ի հետ, յետ միասինս, ի հետ ու ի հետ,
ի հետ ուի հետ, ի հետ ի հետ, հետ մի այլ,
վալ, ի վալէ, յեգուց:

Այլ, այլ չ, մենակ, մինակ

Խակի, վասակի, ամենս, լուկ, բահրակ,
ի լան, ճիճն, ի ճիճն, քիչ, չէ, չ

Զինչ ցեղ, մվ գիտէ, ոտին մի սմի ան-
դամա

մւր, էր, քանի՞, աւելի, այլ աւելի,
մէն գուկ, միմիայն, շատ

զ, ի, ց, ընդ, ըստ, առ

ի խէլ, զարթ, զարդ, զարթել (բացի)
վանց, քանց, ինչու, ինչզի, ինչփի,
առանց:

Շաղկապներ

ու, ու վ, վ,

նա, նայ

ամ ռուրեմն

հապա, ապա

այլ

կամ, կամ... կամ

ոչ, ու ոչ, ու ոչ... ու ոչ

որ (զի)

եփ (երբ)

զէգ, զէտ (իրր)

ինչուր (մինչև)

եթէ, նաթէ, ապա թէ, ամ թէ, որ թէ,

և թէ — թէ չի, թի չի «եթէ ոչ»
քաւել (բացի)

Բայց ամենից աւելի ձեւափոխեալ վի-
ճակն է ներկայացնում, լծորդութիւնները
դրաբարի պէս այստեղ էլ չորս են. եմ, իմ,
ամ, ում, բայց նկատելի են հսկուեալ նոր
հանդամանքները:

1. Լծորդութիւնները իրենց դիրքերը
փոխել են. այսինքն գրաբարի այսինչ բա-
ռը որ պատկանում է այսինչ լծորդութեան,
վերածուել է մի ուրիշ լծորդութեան. օր.
եւանեմ-եւնում, կլանեմ-կլնում, յօժըրնիլ-
յօժըրնալ են:

2. Ա. Ա. Փ. Գ. Լծորդութեանց երկրորդ
տեսակի միջին աճայնը կորել է. ինչ. բաժ-
նեմ-բաժանեմ, բաժնիմ-բաժանիմ, ա-
մբանամ, լոկնամ-լոգնամ, յօժըրնամ,
չողնամ, լմնամ-լցուիլ են:

3. Զորբորդ լծորդութեան առաջին տե-
սակը (ում) չնջուել է, մուռմ է միայն երկ-
րորդ տեսակը նում, որին անցել են նաև
ուրիշ բայիր. ինչ. ենում, մտնում, զըս-
նում, կնում, հեծնում, սկսնում ևն. այս-
պէսում նում ձեռվ բայիրի թիւը շատացել է:

4. Գրաբարի մէջ կրաւորականը իւրա-
յատուկ ձեւ չունէր, այլ երկրորդ լծորդու-
թեան ձեւը ծառայում էր առաջին և երկ-
րորդ լծորդութեան կրաւորականի համար:
Միջին հայերէնը ստեղծել է կրաւորականի
համար առանձին մի ձեւ, որ է ուիմ, վիմ,
վիմ և որ շարունակում է նաև արզի հա-
յերէնում. բայց միջին հայերէնը ունի մի
խումբ այնպիսի կրաւորական ձեւեր, որոնց
կազմութիւնը չի համապատասխանում ար-
դի ձեւերին. ինչ. գողանվիլ (գողացուիլ),
յիմընվիլ (իմացուիլ), բանվիլ (բացուիլ),
վանվիլ, տվվիլ (տրուիլ):

5. Ընդհանրապէս խօսելով գրաբարի
մէջ բայի սեղը անորոշ էր. միջին հայերէ-
նը ստեղծել է երեք սեղ. կրաւորականի
համար ուիլ ձեւը ստեղծելուց յետոյ, ներ-
գործականին յատկացըլել է ել և չեղոքին
իլ վերջաւորութիւնը. այսպէս են օր.

Ներգ.	չեզ.	կրաւ.
բաժնեմ	բաժնիմ	բաժնուիմ
եփեմ	եփիմ	եփուիմ
այրեմ	այրիմ	այրուիմ

Դժբախտաբար այս գեղեցիկ զանազա-
նութիւնը ընդհանրացած չէ նոյն իսկ մի-

ջին հայերէնի մէջ, այսպէս որ սրանց կողքին գտնում ենք նաև իմ վերջաւորութեամբ ներգործական բայեր էլ. ինչ . ուսնիմ, տանիմ, ընդունիմ են:

6. Անցողականը կազմում է ցնեմ, եցնեմ, ացնեմ մասնիկներով. ինչ . ուսցնեմ, սնցնեմ, փթշնեմ, յիրցնեմ (յարուցանեմ), անցնեմ, պակսցնեմ, զգենկցնեմ, յեմցնեմ, թուլացնեմ, զօրացնեմ:

Խոնարհման գրութիւնը ամբողջապէս փոխուած է և համարեա թէ նոյն է արդի արկմտեան կամ կը ճիւղի բարբառների խոնարիկան հետ:

Ներկան կազմում է կու մասնիկով, ամեն տեսակ բայերի համար անխտիր.— նըկատերի է որ արդի արկմտեան աշխարհաբարը միավանկների մօտ ունի կու, բազմավանկների մօտ գործ է ածում կը, իսկ ճայնաւորով սկսող բայերի համար զնում է կ.— այսպիսի զանազանութիւններ չկան կլիկեան հայերէնում. օր. կու տանի, կու բաժեմեմ, կու այնէ առնում էն, կու հայիմ զնայում եմ, կու գայ զգալիս էս:

Անցեալ անկատարը ճիշտ նոյն սոնզ է, ինչ . կու կարծէր, կու հայէր, կու երթային են:

Ապանին կազմում է երրեմն ներկայի նման և երրեմն էլ կամի բայով. ինչ . կու տամ, կու տանի, զնալ կամի, կամի ելնել, կամի մեռնիլ են:

Անցեալ կատարեալը պահում է դեռ զըրաբարի ձեւ, ինչպէս է նաև արդի աշխարհաբարուու և բարբառների մեծագոյն մաս մէջ:— նկատերի է որ շարունակում է զես կատարեալի և կամ յաւելուածը. ինչպէս էած, ենաս, եղարկ են:— զալ տալ, զնել բայերը ստացել են բոլորովին նոր ձեմի կատարեալ. երեկ (եկաւ), երես (տուեց), երեկ (զրեց):

Հրամայականը գրաբարի սոնզ է. երրորդ գէմքը վերջանում է կ. ինչ . այրէ, օծնէ, մանարէ, ընկէ. անցողականի մէջ ոյ կամ ու. ինչ . եռցոյ, թանձրցոյ, կաթեցոյ, իջու, կակլցու, հովցու, չողցու, չորցու. Ստորագասականը ներկայացնում է գրաբարի ներկան: Այսպէսով կլիկեան հայերէնի սահմանական ներկան զանազանում է սոլորագասականից միայն կու մասնիկի յաւելումով: Կան մի քանի բայեր, որոնց ստորագասականը տարբերում է ներկայից

ստանալով ենամ ձեւը. այսպէս են հետեւեալ բայերը

ներկ.		Ստոր.
կինամ, լինամ		լինիմ
ուննամ, ունամ		ունիմ
կենամ	կամ	
զիտենամ		զիտեմ
կամենամ		կամիմ
կարենամ		կարեմ
ուզենամ	ուզեմ	
պարտենամ		պարտիմ
պիտենամ		պիտիմ
թվենամ		թվիմ
այժենամ, աժենամ	այժեմ	, աժեմ
ծարվենամ		ծարվիմ
ճանչենամ		ճանչեմ
ուռենամ	ուռիմ	
տմաչենամ		տմաչեմ
մօտենամ	մօտիմ	
վախենամ		վախիմ

Բայերի գերջաւորութիւններից փախուած է միայն ներկայ յոգնակի առաջին գէմքը (նե. փոխանակ գրաբար մէ.) կատարեալի՝ յոգնակի առաջին գէմքը միայն է յանդն ունի և աշխարհաբարի նի ձեւը չկայ գետ կատարեալի եղակի երկրորդ գէմքն ունի իր փոխանակ գրաբար եւ. ինչ . եփեցիր, գրիր, եղիր, եղակի երրորդ գէմքը եց՝ փոխանակ եաց. ինչ . կորեց, քլիեց, դահեց, խանգրեց, համեց, առջնարեց են. շատ անզամ զարձած է աւ. ինչ . տեսաւ, եղաւ, եղաւ, մտաւ, իլաւ են:

Գերբայները պահում են գրաբարի ձեւը՝ ննթարկուելով միայն ձայնական փոխութեանց. ինչ .

Ներկ. գերը. օդ, աւղ. — կորսնող, զըրակիսող, հոգոզ, հասկնող, են:

Ապ. գերը. լի. — ընդունելի, անթշկելի. [Ո] վերջաւորութիւնը կազմում է ածական. ինչ . զայլ գեղերն որ հալեւոյ է և զայլ գեղերն որ սղալոյ է. զայն խիժերն որ չէ լոսելոյ:

Անց. գերը. լ. ինչ . կարգել, կցիլ, յեմել, հովցել, յիմցիլ, լմցել, յաւելցուացել, եկել, կրաւ. բերուել, լսուել են:

Լայն գործածութիւն է որուած ածեւով գերբայներին. ինչ . ածած, համած, սոլած, քլասծ, տակրած:

Սրանցից կազմում են բաղադրիալ ձեւ և բրը . ինչ .

Ներք .	Կրու .
լոսել եմ , լոսել լինիմ	լոսուել եմ , լինիմ
լոսել էր , լոսել լինիմ	լոսուել էր , լինիմ
լոսել լինամ	լոսուել լինամ
լոսել լինայի	լոսուել լինայի
լոսած եմ . լինիմ	լոսած էր , լինիմ
լոսած էր , լինիմ	լոսած լինամ , լինայի :

Հետաքրքրական է բացասական բայի կազմութիւնը . գրաբարը մի շատ պարզ ձեւ ունի . նա պահում է գրականի խոնարհման ձեւը անփոփոխ՝ աւելացնելով միայն ոչ կամ չ մակրաց : Կիրիկան հայերեն այս գրառ թիւնը շարունակում է կատարեալի և ստորագանական ներկայի և անցհալի համար . իսկ սահմանական ներկան ու անհամարը կազմում է բոլորպին նոր ոճով : — Առանձ են բայի անորոշ ժամանակը , գնում են նրա վրայ ի կամ յ նախդիրը և կցում են էական բայի բացասական ներկայ և անհամար ձեւերին ինչ . չեմ յերթալ , չեմ յանուլ , չեմ ի կարել , չեմ ի խօսել , չեմ ի գնարել , չեմ ի հանել , չեմ ի հանեցնել , չեմ ի հրամայել , չեմ ի տալ , չեմ ի փնտել , չեմ ի յայրել են . եղակի գ . գեմքում չի կարող է սպուելով տալ չի . ահա լոսեմ բայի խոնարհումը .

չեմ ի լոսել	չեմ ի լոսել
չեմ ի լոսել	չեմ ի լոսել
չեմ ի լոսել	չեմ ի լոսել
չեմ ի լոսել	չեմ ի լոսել
չեմ ի լոսել	չեմ ի լոսել
չեմ ի լոսել	չեմ ի լոսել
չեմ ի լոսել	չեմ ի լոսել
չեմ ի լոսել	չեմ ի լոսել

Կատարեալն է չլոսեցի , չլոսեցիր կն . ստորագանականը չլոսեմ , չլոսէի և նու Ասպանին նոյն է ներկայի հետ :

Հրամայականը գրաբարի պէս լինում է մի' լոսեր , մի' առնուը , մի' մատներ . բայց հետաքրքրական նմանողութեամբ՝ հետեւով սահմանականին մերթ ծայրի բ զարձնում է լ և մերթ էլ իրեք երկորդ գէմք դարձնում է ս . ինչ . մի տալ , մի առնուլ , մի արգիւլ , մի լսել , մի արծկել , մի շիւս , մի արգիւլս , մի զնես , մի ընդունիս են :

Սահմանական բացասականի այս ձեւը

ուրիշ բան չէ , եթէ ոչ մի տեսակ ներգոյական . չեմ ի լոսել , չեմ ի տալ նշանակում են լոսելու գործողութեան մէջ չեմ են : Այսպէս ցմրոնելուց յետոյ պէտք էր սպասել որ հաստատականի մէջ էլ սահմանականը այսպիսի ձեւ ստանար . . և իրօք Վարդանի և այլ գողոների հայերենում գտնում ենք են ի կուուլ կուուում են , եմ յանձնել , է ի վառիլ . հաւատալ եմ , է ի գալ , ոնց եւնեմ ի գուրս՝ երբ երկինքն ի շուրջ է ի գալ և զիս ի ներք է ի յանել . ինչ ցեղ եւնեմ , երբ երկինքն ի վրայս է ի փլէել և զիս ի ներքեն է յարգելել :

Այս ձեւ սահմանականը նախարարն է առենելեան հայերենի ում ձեռվ ներկայի , որ նոյնպէս ուրիշ բան չէ , եթէ ոչ ներգոյական հողով . չեմ խաղում , չեմ ծեծում բուն նշանակում են խաղի մէջ չեմ , ծեծի մէջ չեմ են :

Անկանն բայերը գրաբարի մէջ թէւ այնքան շատ ու այնքան գժուար չեն , որ չափ ուրիշ լեզուների մէջ , բայց այնու ամենայնիւ լեզուի ընդհանուր պարզութեան և միօրինակութեան մէջ ներկայացնում են անհարթութիւններ : Միջին հայերենը այստեղ էլ զրել է իր ձեռքը : Նախ որովհետեւ գրաբարի ապանին և ստորագանականը ջնջուած են , հետեւարար և գժուարութիւնների մի նշանաւոր մասը ինքնին վերացած է բոլոր անկանու բայերի մէջ , երկորդ՝ անկանու բայերից մի քանիսը ամբողջապէս գործածութիւնից զուրա են ընկած : Մնան են ուրեմն մի խումբ անկանու բայերի կատարեալը , հրամայականը և անցհալ շերբայր , որոնք շարունակում են գետ իրենց գոյութիւնը : Բայց այստեղ էլ միջին հայերենը շատ անգամ անկանն ձեւերը ջնջելով՝ վերածել է կանոնաւորի կամ զոնէ աւելի հեշտացըել .

Կնեմ-կար . լսեցի , հրմ . լսէ , լսեցէք՝ փիւ . լոււայ , լոււր , լոււարուք . ճանաչեմ-կոր . ճանչեցի փիւ . ծանեայ

գնեմ-կար . գրի , զրիր , եղիր , զրաք , գրիք , զրին՝ փիւ . եղի , եղիր , եղ , եղաք , եղիք , եղին .

տամ-կտր . տուի , տուիր , երետ , տուաք տուիք , տուին փիւ . ետու . . առնեմ-կտր . այրի , այրիր , արար , այրաք , այրիք , այրին , փիւ . արարի , արաբեր , արար , արա-

բաք, արարիք, արարին — հրմ. այրէք փխ. արարէք:

Այստեղ զերջ ենք տալիս կիլիկեան հայերէնի նկարագրութեան: Ամփոփելով մեր խօսքը, կարող ենք ասել որ միջին հայերէնը կանգնած է գրաբարի և աշխարհաբարի միջն, իրեւ երկուս միացուցիլ ողակը: Կան դէպքերի, ուր նա գեռ գրաբար է, ինչպէս հայցականի զ և բացառականի ի, և նախողիների գործածութեան մէջ: Բայց աւելի շատ են այն դէպքերը, ուր նա բոլորովին աշխարհաբար է: Ինչպէս կտր. գրի, զըիր, տուիր են: Աւելի թիքին այն դէպքերը, ուր նա իրեւ անցման շրջան, ներկայացնում է միաժամանակ թէ՛ գրաբարը և թէ՛ աշխարհաբարը: Ինչպէս յոյնակիի կազմութեան մէջ, ուր ժամանակով զերջացող բառերը ստանում էին ք, բաղաձայնով զերջացողները եւ են: Աշխարհաբարի հետ համաձայնութեան դէպքերը աւելի կշատանան, եթէ փոխանակ տոնելու գրական աշխարհաբարը, համեմատութեան հետ առնենք արգի զանազան բարբառները: Այսպէս այն զանազանութիւնը, որ գտնում ենք միջին հայերէնում յոդնակիի կազմութեան մէջ (ձայնառողջ յանգող բառերի համար ք, բաղաձայնով յանգող բառերի համար եւ), մինչեւ այժմ էլ կայ Նոր Զուոյաի հայոց բարբառում: — Հայցականի զ նախողիր կայ Մշոյ և Առուշայի հայոց բարբառում: — բացառականի նախողիր Սիւրիոյ հայոց բարբառում: — Կատարեալի երես, երեդ, երեկ (տուեց, զըրեց, կաւ) ձեւերը կան թիֆլիսի բարբառում: — Ձայնառորի մօտ կու մասնիկի գործածութիւնը առանց սպան կայ նոյնպէս թիֆլիսի բարբառում (կու առնիմ, կու ազատիմ, կու աղօթիմ, կու էրիմ են). և այսպէս ուրիշ շատ մանրամասնութիւններ:

Վերջին անգամ պէտք է կրկնել այն, ինչ որ տասցինք զերեւում, թէ միջին հայերէնը մի բնդկանուր լեզու չէր, այլ թէ կային Հայաստանում և Հայաստանից գուրս բազմաթիւ միջին հայերէն բարբառներ, որոնցից մէկն էլ կիլիկեան հայերէնն էր, որ պետական հայութիւնը կառավագանութեան մէջ է առաջարկութեան մէջ մասնակի բարբառութիւնների հայերէն բարբառների վերաբերմամբ:

Մամ Արեւելցու տուած տեղեկութիւնները իր Թերականութեան մէջ: Խօսելով բայրերի լծորդութեան մասին (էջ 265) այս հեղինակ կը զանազանում է երեք ձեւ: ա, ու և եւ: առաջինին իրը օրինակ տալիս է զամ, գամ, զայ, երկուրդին՝ առնում, առնուս, իսկ երրորդին՝ զեամ, զեաս, որի համար ասում է յատկապէս թիւ «ձեւքակն» է բառս ըստ մէին լեզուաց» (հմմտ. Դարաբաղի բարբառով կյամ, կյաս, կյա): Նոյն հեղինակը յիշում է նաև յեզուց, եզուց ժողովրդական բառի գործածութիւնը, որ հիմայ արկելեան հայերէնում սովորական է: Ճի վաղիւն... զոր գուեհիկըն յեզուց ասեն: Եզուց զառնամքը (էջ 271): Միիթաք Հերացու հայերէնում յոգնակի ուղղականը վերջանում է ս, մինչդեռ կիլիկեայում այդպիսի բան չկայ: — բ ձայնի տեղ յանախ գտնում ենք ի: ինչ: չի փոխանակ չը, խսպիտակ փոխանակ [լուսպիտակ հն]: անցեալ զերբարը վերջանում է եւ մինչդեռ կիլիկեայում վերջանում է ս արդանի գրուածներում գտնում ենք ներգոյական հորովի և սահմանականի ուժ ձեւը, որ արելեան հայերէնի սկզբնառորդութիւնն է: ինչ: ի սրտումն, աղօթք են առնում: — Բնինի մի արձանագրութեան մէջ որ զըրուած է 1358 թուին, գտնում ենք հետեւեալ բարբառային ձեւերը: — Էսիր (փիւ: այսոր ասրած), յգ: սեռ: երի փիւ: երոյ: ինչ, նորտերին: — բերաց փիւ: երեր սրերաւ, բըրեցու:

Այսպատակինի մէջ գտնում ենք չաքս, փիւ: չաք, որ է չափ, տեսել փիւ: տեսուց, որ է տեսանել, երեկ փիւ: կիլիկեան այրիկ աւալուսին, որը փիւ: իր: ոյրեն, յոյրմէն փիւ: իրեն, յիթէն հն:

Արձանագրութիւնների և յշատակարանների մի կանոնաւոր հետազօտութիւն կատարողանց թերեւ աւելի շատ բան ասել այս շշանի հայերէն բարբառների վերաբերմամբ:

ԳՐՈՅ. Հ. ԱՃԱՌԵԵՆ